

ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(Տոյ տուրիստի յիշողութիւններէց)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

(Շարունակութիւն ¹)

«Թէպէտ և ոչ էցեմք ըստական ասել զամենայն չարքան... սակայն և ոչ լուել կամեմք ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ ասացուք փոքր է շատէ, զի ձայնակէցք լիցուք այնոցելի... զի և դու իբրև լուիցես՝ ոչ սակաւ արտասուս կերուցուս է վերայ աղբիս Թշուառութեանս: Ձեռքս քշմարտութեամբ զերս իրացն ասելով ոչ լուցիցս: Այլ է կարծ ընդոստուցեալ, և ոչ է լուր զարթուցեալ. այլ ես ինքնին անձամբ անդէն է տեղուցն պատահեցի և տեսի և լուայ...»

ԵՂԻՆԷ:

Огняишь—зло вокругъ черезчуръ ужъ гнететь,
Ночь вокругъ черезчуръ ужъ темна!

Надсонъ.

II

ՍԱՀՄԱՆԻՑ ՄԻՆՉԵՒԻ ԿԱՐԻՆ

Հոկտեմբերի 31-ին առաւօտեան իմացայ, որ 21 հոգի տաճկաստանցի հայ մշակներ Կարսից հասել են Ղարաուրղան և նոյն օրը պէտք է անցնեն սահմանը: Ես յարմար առիթ համարեցի նոցա հետ միասին գնալ Զվին, իսկ այնտեղից մարդ վարձել մինչև Կարին: Մշակների հետ մինչև Կարին անյարմար էր, որովհետև շատ

¹) Տես «Մուրճ»-ի № 4.

դանդաղ պիտի դնային իրանց հետ եղած 2 սայլերի պատճառով: Մշակները զարմանքով էին նայում ինձ վերայ, և չէին կարող հասկանալ, թէ ի՞նչը կարող էր ստիպել շաղային այս խաթալու ճանփաներով մինմենարի ճանապարհորդելու: «Աղայ՛, մէնակ չը գնաս. քանի մը մարդ ա՛ռ քո հետ Զվինէն», զգուշացնում էին նոքա: Ղարաուրդանից մինչև Զվին մօտ 8 վերստ է:

Մասլ օր էր: Անձրևը բարակ մաղում էր: Կէսօրից անց էր, երբ ճանապարհ ընկանք ձորով: Մինչև Կարին խճուղի բոլորովին չը կայ. պատերազմի ժամանակ ռուսները իրանց գործողութիւնների համար փոքր ինչ հարթել, յարմարացրել էին ճանապարհը, որը նոյն դրութեան մէջ, դեռ մի քիչ էլ աւելի խանգարած, գտնուում է և այժմ: Մի քանի օր անդադար եկած և հալած ձիւնից և եկող անձրևից կազմել էր թանձր, լպրծուն և կպչող ցեխ, որը դժարացնում էր քայլելու թէ՛ մարդկանց և թէ՛ անասուններին:

Մի քանի քայլ հեռանալով Ղարաուրդան գիւղից՝ մօտեցանք երկու պետութիւնների սահմաններին, որը բաժանուում է մի փայտեայ ուղեփակով (ЗАСТАВА): Ռուսաց հողի վրայ, սահմանազխին, բարձրանում է մի քարեայ պահականոց դիտանոցով: Ուղեփակի մօտ կանգնած էին երկու ռուս սահմանապահ զինւորներ, որոնք, երբ մենք մօտեցանք, պահանջեցին մաքսատնից մեզ տւած տոմսերը և յետոյ թողին մեզ անցնել Տաճկաստանի հողը: Ուղեփակից մի քանի քայլ հեռու դրւած է մի մեծ խորանարդաձև սահմանաքար:

Ճանապարհը ընկած է մի բաւականին լայն ձորով, որից անցնում է մի գետ: Մշակները իրանց ծանր իրերը բարձել էին երկու սայլերի վրայ, լծած մի մի ջուխտ եզներով: Ես իմ երկու խուրջիներէից մինը նոյնպէս դրել էի սայլերից մէկի վերայ: Մշակները խումբ խումբ գնում էին ճանապարհից դուրս՝ զառիվայրերով և աւելի ցամաք տեղերով, իսկ ես ճարահատեալ քըւում էի ճանապարհով, որի մի կողմից գետն էր, իսկ միւս կողմից՝ սարերի անընդհատ շղթան: Բոլոր խումբի վերջից ձուռալով, դանդաղ շարժուում էին սայլերը:

Մի քիչ հեռացել էինք սահմանից, երբ աջ թևի վրայ, գետի միւս կողմում, բլրաձև սարի լանջին երևաց առաջին տաճկաց գիւղը: Նա ոչնչով չէր զանազանուում սահմանի միւս մասում եղած գիւղերից. անտաշ քարերից և ցեխից շինած, հողածածկ, նոյն ո-

զորմելի որջերը, խոտաղէզերը, ծառերից զուրկ շրջակայքը, որը տարւայ այդ եղանակին աւելի ևս տխուր տպաւորութիւն էր թողնում: Գարնանը կամ ամառը սարերը զոնէ ծածկւած են լինում զայլարու ծաղկազարդ գորգով, իսկ այժմ, ձմեռնամուտին, երևում էին մերկ սև սարերը, խոտերի չորացած, դեղնած ցողուններով ծածկած: Գիւղից դուրս էր եկել ճանապարհը մի տաճիկ պաշտօնեայ, Ֆէսը գլխին, տաճկական զինւորականի զգեստը հագին, երկար կոշիկները ոտներին: Նա պահանջեց անցաթղթերը և նայելուց յետոյ թողեց մեզ հանգիստ շարունակել մեր ճանապարհը:

Այդ անտանելի ճանապարհին ձիս անդադար սայթաքում էր և վերջը փառաւորապէս տարածւեց ցեխի մէջ: Ես անջնաս ոտքի կանգնեցի և որովհետև սարսափելի ցեխը ահագին քանակութեամբ կպչելով կոշիկներին դժւարացնում էր ոտներս պոկել գետնից և ուղղակի կրկին ձի նստել, ուստի քաշեցի նորան գետի ափը, քարքարոտ մի տեղ: Ոստ դնելով ասպանդակը նոր էի բարձրացել թամբի վրան, երբ ձիս կրկին սայթաքւեց և կորցնելով հաւասարակշռութիւնը ընկաւ ուղղակի գետը, ինձ էլ իւր հետ տանելով: Զուրը հասնում էր մինչև գօտիս: Ես դուրս եկայ ջրից թրջւած հաւի պէս, քաշելով յետևից վախից դողդողացող ձիս: Երբ կրկին հեծայ և հասայ մշակներին, որոնք բոլոր այն ժամանակը, երբ ես զանազան սալտօ-մօրտալներ էի անում իմ ձիուս հետ միասին, անտարբերութեամբ հեռուից «թամաշա» էին անում... նոքա բարեհաճեցին միայն նկատել. «ատ ի՞նչ է եղեր ատոր, ինչո՞ւ ընկաւ...»:

Մօտ վեց վերստ անցել էինք սահմանազլխից, երբ ձորի աջ կողմի սարերի անընդհատ շղթան վերջացաւ մի սեպաձև լեռնով, որի գագաթին կանգնած էին մի հին հայկական բերդի աւերակներ: Տաճիկները երկրին տիրապետելուց և քարուքանդ անելուց յետոյ իւրանք ոչ մի բերդ չեն կառուցել, այլ հիներից միայն մի քանիսը պահպանել և ամրացրել են: Մուտքով այդ լեռան ստորոտով դէպի աջ մտանք մի ուրիշ ձոր, ուր գետափին Զվին տաճկաբնակ գիւղն էր երևում:

Երբ մեր խումբը, բացի յետ մնացած սայլերից, մօտեցաւ այդ գիւղին, որի սկզբին գտնւում էր տաճկական մաքսատունը՝ մի կիսա-

եւրոպական ձևով շինած քարից փոքրիկ շինութիւն՝ մեր առաջ դուրս եկան մի քանի տաճիկ պաշտօնեաներ: Նոքա առան իմ խուրջինը, նշանակեցին իրանց մօտ ձիս և տեղեկացան, որ միւս խուրջինս սայլերի հետ կը գայ: Ես ունէի Զվինի «հէքիմ-բաշու» նորա ծանօթ պ. Ա. Տ. Գ.-ից (Ղարաուրդանից) մի յանձնարարական, իսկ «բիմ-բաշու» (հազարապետի) համար նոյն անձից մի հօխա (3 Ֆ.) «բաստրմա»: Զարմանալին այն էր, որ բաստրման թէև զալիս էր Երզըրումից, բայց Զվինի տաճիկ պաշտօնեաները իրրև «պարզև» սպասում էին Ղարաուրդանից...

Ես իջայ ձիուց և խնդրեցի մօտ կանգնած մի տաճիկ գիւղացուց ցոյց տալ ինձ «հէքիմ-բաշու» բնակարանը: Գետակի մի կողմից, ուր պաշտօնական շինութիւններ էին՝ մաքսատունը և բիմ-բաշու տնակը՝ դէպի միւսը, ուր գիւղացիների տներն էին, տանում էին երկու բարակ գերաններ ձգած գետակի մի ափից միւսը: Անցնելով այդ կամուրջից դուրս եկայ մի ցեխոտ, հոտած ջրերով լի փոսերով ծածկած մի բաց տեղ, խրճիթների առջև: Առաջնորդս մտեցաւ ողորմելի խրճիթներից մէկին, ծածկոցի տակից երևացող դռնից մտաւ մի փոքրիկ, նեղ, մուտ շվաք՝ քաշելով իր յետեւից ձիս:

— Իու ինձ հէքիմ-բաշու մօտ տար, այդ գոմն ինչո՞ւ ես գնում, նկատեցի ես զարմացած:

— Էֆէ՛նդմ, համեցէ՛ք, հէքիմ-բաշին էլ հէնց այստեղ է ապրում:

Մուտ շվաքի մի ծայրին իրար մօտ կային երկու դռներ: Տաճիկը բացեց նոցանից աւելի մեծը, որը տանում էր գոմը, իսկ միւսի վրայ ինձ ցոյց տալով ասաց. «համեցէ՛ք, մտէ՛ք, էֆէ՛նդմ, այ՛ն որտեղ է հէքիմ-բաշու օրան»: Իուււր բաց արի և մտայ մի մուտ, ցուրտ, ողորմելի նկուղ: Իրան առջև հանդիպեցի մի մարդու:

— Իո՞ւք էք Խօաննիս-էֆէնդին, հարցրի ես:

— Այո՛, համեցէ՛ք, կը խնդրեմ հոս եկէք, պատասխանեց հայերէն լեզուով, յունական թիւատ արտասանութեամբ պարոնը: Ես յանձնեցի նորան յանձնարարական նամակ: Խօաննիս-էֆէնդին մտեցաւ բուխարում վառւող կրակին, նամակը բացեց, այս կողմ այն կողմ շուռ տւեց և դրեց ջէբը: Նամակը գրւած էր հայերէն. ես հասկացայ որ յոյն պարոնը հայերէն կարդալ չը գիտէ, ուստի առաջարկեցի նորան, որ նամակը տայ ինձ կարդալու: Նա տւեց և ես

կարդացի բարձր. «... Իօաննիս-էֆէնդի', Ձեզ նամակ յանձնող... էֆէնդիին իմ... բարեկամն է: Ուզում է գնալ Երզբերում... բոլորովին անփորձ մի երիտասարդ է և առաջին անգամ ձեր երկրում... խընդրեմ դիւրութիւններ տաք և աշխատէք հաւատարիմ մարդկանց հետ ճանապարհ ձգելու...»:

—Շա'տ լաւ, շա'տ աղէկ, շատ ուրախ եմ, մօտեցէք հոս կրակին մօտ. առ ի'նչպէս է եղեր, որ ա'տպէս թրջւել էք...:

Յետոյ նա դիմեց իր սպասաւոր-դինւոր (ДЕНЬЩИЦЬ) Մուստաֆային, որը մի անկիւնում պզգել էր, և ասաց, որ էլի փայտ ձգէ բուխարին: Իօաննիս-էֆէնդին տւեց չոր շորեր ինձ, որ փոխեմ իմ թրջւածը: Նորա շորերում նստեցի ծալապատիկ բուխարու մօտ փուած մի կեղտոտ դօշակի վրայ և կարճ կերպով պատմեցի հէջիմբաշուն ինձ հետ պատահածը: Յետոյ նա ինքը առնելով իր հետ Մուստաֆային գնաց մաքսատունը իրերս բերելու: Իմ հիւրասէր տանտիրոջ բացակայութեան ժամանակից օգտւելով, մի ընդհանուր հասկացողութիւն տամ ընթերցողին տաճկական Էսկուլապի բնակարանի մասին:

Մութը շվաքից մի ցած, փոքրիկ, մի-փեղկեայ կեղտոտ դռնից մտնում էք աւելի ևս մութ մի որջ: Երբ ձեր աչքերը քիչ ընտելանում են մութին, տեսնում էք աջ կողմից գերաններից շինած մի պատ. այդ կողմից որոշ կերպով լուսւմ են անասունների Ֆնչոցը, որոճը և խրթխրթալի ուտելը: Սենեակի միւս երեք պատերը մերկ անտաշ քարերից և ցեխից են: Այդ օդայի լայնութիւնը հինգ քայլ կը լինէր, իսկ երկայնութիւնը՝ տասը: Մխից սևացած գերաններից և կոճերից շինած առաստաղին մօտ, պատերից մէկում կար մի շատ փոքրիկ քառանկիւնի ծակ, մի կտոր ապակիով ծածկած. դա միակ լուսամուտն էր օդայում: Յատակը հողից էր: Սենեակի մի մասում փուած էր մի փոքրիկ խասիր, իսկ դրան մօտ, բաց խոնաւ գետինն էր: Ճակատի պատում բուխարին էր, որի մի կողմից շինած էր տախտակներից մի երկար թախտ, միւս կողմից մի անկիւնում դրած էր մի փոքրիկ սունդուկ: Թախտի վրայ դարսած էր բժշկի անկողինն, իսկ տակին՝ վառելիք ցախը: Պատերից մէկին կպցրած էր մի տախտակ վրան մի քանի սրւակներ և թղթի տոպրակներ, բոլորը թողով ծածկած. երևի դեղեր էին: Իրան մօտ, մերկ գետնին դրած էր մի

փայտեայ դոյլ ջուր՝ փալատով ծածկած: Ահա տաճիկ զինւորական բժշկի, ամօթ չը լինի ասել, ասենեակը:

Մի քանի ժամանակից յետոյ վերադարձաւ բժիշկը Մուստաֆայի հետ, որը խտտած ունէր իմ պլէդիս մէջը խառն ի խուռն ածած մաքսատնում քրքրւած իրերս: Մուստաֆան տաճկական կանոնաւոր զօրքի (նիզամ) զինւոր էր, մի նիհար, փոքրահասակ, միշտ լուռ, բայց ժպիտը թրաշած դէմքին մարդ, հին մաշուած զինւորական զգեստով, կեղտոտ ֆէսը գլխին: Նա իր էֆէնդու հրամանները կատարում էր դանդաղկոտութեամբ, կարծես միայն զիջանելով նորան:

Մրսած, թրջւած՝ ես պահանջ էի զգում տաք թէյ խմելու: Բժշկի մօտ կար չայդան, բայց թէյ, շաքար և բաժակներ չ'ունէր, և ուզում էր ուղարկել բերելու բիւր-բաշու մօտից. ես յայտնեցի որ թէյ և շաքար ունիմ, այնպէս որ մնում է միայն բաժակներ ճարել: Մինչ ջուրը չայդանով տաքացնւում էր բուխարում, ես ու բժիշկը, որը նստեց ինձպէս բուխարու մօտ ծալապատիկ, խօսում էինք:

Իօաննիս-էֆէնդի Կոստանդինիտիսը մի պօլսեցի յոյն էր, միջին հասակից քիչ բարձր, մօտ 32 տարեկան սև կոլոր մորուքով, կարմիր թշերով մի երիտասարդ: Իօաննիս-էֆէնդին իր ուսումը վերջացրել էր Պօլսոյ Վիստրական-բժշկական վարժարանում (մէքթեբի թրբիյէի շահխանէ), որը համարւում է Տաճկաստանի ամենաբարեկարգ բարձրագոյն ուսումնարանը: Այդ բարձրագոյն վարժարանը ընդունւում են բոլոր ազգութիւններից: Հայերը և յոյները ուսում առնողների մեծամասնութիւնն են կազմում այդտեղ. տաճիկների ուղեղներին այն չնչին մտաւոր աշխատանքի պահանջներն էլ, որոնք հարկաւոր են այդ վարժարանում, անմատչելի են: Այդ տաճկաց բժշկական ֆակուլտետը ունի երկու բաժանմունք՝ զինւորական և քաղաքային. առաջին բաժանմունքում աւարտողները ստանում են զինւորական բժշկի դիպլոմ և ծառայում են բանակում: Երկրորդ բաժանմունքից (քաղաքային), աւարտողները նոյնպէս ստանում են դիպլոմ և դառնում են կամ քաղաքային մասնաւոր բժիշկներ կամ դեղագործներ: Իր տւած ուսման աստիճանով այդ տաճկաց ամենաբարձր բժշկական ուսումնարանը համահասարակ է եւրոպացիների ամենայետին ֆելդշերական ուսումնարաններին. իսկ այդ բժիշկները՝ փառք

է եթէ մեր Ֆելդշերներն էլ է լինէին: Ազգասէր տաճիկները ինքնախաբուծեամբ իրանց մխիթարում են, որ ոչնչով յետ չեն եւրոպացիներէր, իրանք էլ «համալսարան» ունին, «բարձրագոյն վարժարաններ», որոնք սակայն լոկ անուններ են: Ոչ մի տաճիկ, որը միջոց ունենայ դիմելու եւրոպական կրթութիւն ստացած բժշկին, չի վրստահանալ իրանց սեպհական բժշկներին» հրաւիրել: Իօաննիս-է-Ֆէնդին աւարտելով այդ «մէքթէբի» ղինւորական բաժնուճնշանակւում է Հայաստանի զանազան տեղերում, իբրև ղինւորական բժիշկ: Նա ստանում է ամսական 5 օսմ. ոսկի (մօտ 50 ռուբլի), հաշւելով և այդ գումարի մէջ բոլոր այն կենսական պիտոյքները, որը նորան տրւում է տէրութիւնից: Տաճկաց կառավարութիւնը պատերազմից յետոյ ընդօրինակել է մի բօլիդիկ—չը դիտեմ ումից. օրինակ, յոյներին տէրութեան պաշտօններով ուղարկում են Հայաստան, իսկ հայերին Ռումելիայ և ուրիշ տեղեր, միայն Հայաստանից դուրս: Այդպէս էլ Իօաննիս-է-Ֆէնդին ուղարկւում է ղինւորական բժշկի պաշտօնով Հայաստանի զանազան կողմերը, — Երզնքում, Մուշ, Վան և այժմ Զվին: Ապրելով Հայաստանի զանազան կողմերում, նա սովորում է հայերէն խօսել: Նա պատմում էր, թէ տաճիկներից անւանւած «Քիւրդիստանում» այնքան հին հայկական յիշատակներ է տեսել, որ ամեն մի քայլափոխում նա զգում էր թէ գտնւում է մի երկրում, որտեղ ամեն քար, փլատակ, ամեն մի թիղ հող կրում է հայկական անջնջելի հետքեր. որ Երզնքում, Բաղեշոյ և Վանայ վիլայէթների ազգաբնակութեան ամենաստուար մասը հայերն են, այնպէս որ օտարականը, այլազգին, ճարահատեալ սովորում է հայերէն խօսել:

Թէք պատրաստ էր: Մի դատարկ արկղիկ շուռ տւած և դրած մեր մէջ տեղում՝ փոխարինում էր սեղանի: Մեր խօսակցութիւնը շարունակելով հասանք այն հարցին, թէ ի՞նչպէս վաղը ես ճանապարհ ընկնեմ: Մի որոշ եզրակացութեան չը գալով, յետաձգեցինք վճիռը առաւօտեան: Թէքից յետոյ ճաշից աւելացած կորկոտէ փլաւը թաւի մէջ տաքացրւեցաւ և ուղղակի դրւեցաւ էլի այն արկղիկի վրայ՝ երկու փայտեայ դրգալ էլ հետը. դա մեր ընթրիքն էր: Պսակ (տարեւը), պատառաքաղ, դանակ, և այլն՝ մի չը լուած շոպլութիւն էր բժշկի համար. գուցէ մի քանի հատ գոնէր «բիւ-բաշու» մօտ, հիւրերի համար: Ընթրիքից յետոյ պատրաստեցանք քնելու,

ես գետնի վրայ, բժիշկը՝ թախտի: Այսպէս անցկացրի Տաճկաստանում առաջին զիշերը տաճկաց զինւորական բժշկի ողորմելի օգայում:

*
* *

Զարթնելով միւս օր առաւօտեան՝ տեսայ որ բժիշկս էլ արթուն է: Սենեակում սաստիկ ցուրտ լինելով, մարդ չէր կամենում տաք անկողնից վեր կենալ: Խօսանիս-էջէնդին կանչեց Մուստաֆային և պատւիրեց վառել բուխարին: Մառան եկաւ և ասաց թէ «բիմ-բաշին» (հաղարապետը) հրաւիրում է իւր մօտ թէչի երեւի երեկան ուղարկած բաստրման իր ազդեցութիւնը արել էր...: Մենք լացւեցանք, բժիշկը հագաւ իր նշանազգեստը և միասին դուրս եկանք որջից յոյս աշխարհ: Անցնելով երեկաց կամուրջով, մօտեցանք մի ցածր, սպիտակ տնակի, որի տեսքը և ձևը, որքան էլ ողորմելի լինէր, այնու ամենայնիւ էլի տան նման էր: Գլխներս կռացնելով մտանք մի փոքրիկ դռնից ուղղակի բիմ-բաշու սենեակը, որի հողեայ յատակը մի քանի աստիճան ցածր էր դրսի գետնի մակերևոյթից: Ի հարկէ բժշկի որջի հետ համեմատած՝ դա մի պալատ էր: Լուսաւորւած, բաւականին մեծ, զաճած պատերով սենեակը մի վարագուրով բաժանւում էր երկու մասի. կահ կարասիքը բաղկացած էր երկու թախտից զորգերով ծածկած, մի սեղանից և երկու աթոռներից: Դրան մօտ կանգնած էր տաճիկ երիտասարդ սպասաւորը բոբիկ ոտներով: Սեղանի մօտ ինքնաեռի առջև նստած էր բիմ-բաշին՝ մի մօտ 35 տարեկան երիտասարդ նոր նշանազգեստով: Տաճկական ողջոյնը տալուց յետոյ, թէչ առաջարկեց և հարց ու փորձ արեց թէ ո՞ւր եմ գնում: Երբ իմացաւ ուր գնալս, յայտնեց, որ ուրախութեամբ մի երկու զաֆթի կը տար ինձ մինչև Կարին, բայց նրանց դրեց պ. Կօլուբեակիների հետ: Դուրս գալով նորա մօտից ես վճռեցի՝ առանց զաֆթիների ճանապարհ ընկնել, վարձելով մի տաճիկ գիւղացի իր ձիով: Բժշկի թնակարանի տէրը, ծեր տաճիկ գիւղացին, ունէր մի քանի որդիք: Մենք խօսեցինք, որ նորա կրտսեր որդին, 19 ասարեկան պատանին, լինի իմ ուղեցոյցս: Յետոյ բժշկի օգնութեամբ վերջացրի մաքսատան հետ բոլոր ձևականութիւնները (անցաթուղթս նշանակելը, ձիուս համար 2 սպիտակ մէջլիդիէ, մօտ 4 ռուբլի, մաքս վճարելը):

Խալիլը, այսպէս էր իմ պատանի ուղեցոյցիս անունը, կապեց պապերից մնացած հին խենջալը, բարձեց իմ իրերս իր նիհար փոքրիկ ձիու վրայ: Նորա հայրը ինձ էր յանձնում, որ ես մեռ-ղիաթ՝ կենամ իր որդուն, իսկ բժիշկը Խալիլին ասում էր, որ եթէ իմ գլխիս մի բան պատահի՝ էլ նա իր ձեռքից չի պրծնիլ: Ենորհակալութիւն անելով Խօաննիս-էֆէնդուց՝ ես հեծաց ձիս, Մուստաֆայի բուռը դրի մի քանի դուրուշ, որը նա չէր սպասում, ինչպէս այդ անում են ռուսները, և լսելով նորա «Ալլահ բարաքեաթ վերսնա»-ը՝ դուրս եկաց Ձվինից:

Խալիլը տարաւ ինձ ոչ սովորական ճանապարհով, որը սօրսափելի ցեխի պատճառով անանցանելի էր համարեա, այլ մի ուրիշ լեռնային շաւղով: Սարերի անընդհատ կոհակներ զանազան ուղղութեամբ բաժանւած խոր ձորերով ու լեռնադաշտերով, ձորերից վազող գետակներ, բոլորովին ծառերից զուրկ և միայն դալկացած խոտի ծղօտներով ծածկած ամալի երկիր՝ ահա՛ շրջապատող բնութիւնը, որը սիրտ ճմլող տպաւորութիւն էր գործում: Մեր շաւղը անցնում էր ոլորմոլոր պտոյտներով մերթ սարերով ու ձորերով, մերթ այնպիսի զառիվայրերով, որ ձիու մի անզգոյշ քայլ՝ և դուք գլորելով կ'ընկնէիք բարձրութիւնից ձորի քարերի վրայ և ջարդ ու փշուր կը լինէիք: Ոչ մի մշակած անկիւն չէր երևում: Սարերում ու լեռնադաշտերում ցրւած արածում էին ոչխարների ու այծերի հօտեր կամ մի քանի կովեր ու եղներ: Մի կէս ժամաց ճանապարհ հազիւ էինք հեռացել Ձվինից (Ցանկաստանում տարածութիւնը չափում են ժամերով), երբ երևաց աջ թևի վրայ, ճանապարհից դուրս, մի գիւղ. Խալիլի ասելով, քրդեր էին նորա բնակիչները: Լաւ տեղ էր աւազակութիւնների համար. ճանապարհի ձախ կողմից անդունդ էր դէպի խոր ձորը, ետևից՝ բաց տեղ, աջ կողմից՝ քրդի գիւղը, իսկ առաջևից նոյնպէս մի կողմից անդունդն էր, և միւս՝ պարսպանման բարձրացող մի ժայռոտ սար՝ մեթ քարանձաւներով: Սօրսափելի լարւած ուշադրութեամբ էի անցնում այդ տեղից: Ահա հեռուից երևացին քարանձաւների մօտ երեք շարժուող մարմիններ. մօտեցանք... մի կեղտոտ ցնցոտիներով ծածկւած պառաւ քրդուհի էր ծանր բեռը շալակած և մի թուրք գիւղացի, որը առաջից քշում էր մի բեռնած նիհար եղ:

Մի համարեա ուղղահայեաց զառիվայրով բարձրանա-

լով՝ դուրս եկանք մի լեռնադաշտակ: Հեռու, հօրիզօնի զանազան կողմերում, կուտակած էին սարերի խմբեր ձիւնապատ գաղաթներով: Կէսօր էր: Սկսեց ձիւն գալ, իւր հետ բերելով սաստիկ քամի: Իմ ուղեցոյց—Խալիլի ասելով, մօտ էր մի հայաբնակ գիւղ: Իջնելով մի զառիվայրից հասանք Մանծաղ անունով հայաբնակ գիւղը, որը զետեղւած էր մի տափակ—գոգաւոր ձորում: Դա առաջին հայ գիւղն էր, որ ես տեսնում էի Տաճկաստանում: Նա ոչնչով չէր զանազանւում Ալէքսանդրօպօլի գաւառում և Կարսի երկրում տեսածներից.—նոյն ծառազուրկ միակերպ բնութիւնը, քարերից և հողից շինած խրճիթները, խոտադէզերը, աթարների բուրգերը, ցեխոտ հոտած փողոցները: Միայն գիւղացիների տաճկական հագուստները յիշեցնում էին ինձ ուր լինելաւ: Խալիլը մօտեցաւ մի տան, որտեղից դուրս եկաւ մի սապատող հայ գիւղացի և յայտնեց որ իր մօտ տեղ չը կայ ընդունելու. այն ժամանակ դիմեցինք դէպի մի ուրիշ տուն, որը գիւղիս հարուստ տներից մէկն էր: Մի փոքրիկ նեղ ծածկոց—չլաքի դռնից մտանք ընդարձակ գոմը, որի մի անկիւնում գտնւում էր օդան: Այդ քառակուսի բաժանմունքը ունէր համարեա նոյն ձևը և մասերը, որ մենք տեսանք Արմզլու գիւղում (Արագածի լանջով բարձրանալիս), միայն զանազանութիւնը այն էր, որ օդայի յատակը մի քանի աստիճաններով գոմի յատակից բարձր էր և «սաքունների» տեղ տախտակեայ սուներուկաձև թախտեր էին: Բաւականին լոյս էր գոմում, որովհետև թէ գոմի հերթիկը և թէ օդայի առաստաղում երեք փոքրիկ ծակերը բաց էին:

Օդայի փայտեայ երկար սնդուկի ձև ունեցող երկու թախտերից մինի վրայ պառկած էր մի մարդ: Երբ մենք մտանք, այդ մօտ 55 տարեկան գիւղացին վերկացաւ, տեղումը նստեց և թթու, խոժոռած դէմքով նայում էր ինձ վրայ առանց բարեւելու և մի խօսք ասելու: Դա գերդաստանի գլուխն էր: Իր հագուստով ոչնչով չէր զանազանւում տաճկից: Նա հանեց սնքանքալով և յօրանջելով ծխախոտի տուփը, պապիրոս շինեց և սկսեց լուռ ու մունջ ծխել: Ես բարեկեցի նարան, նա մի բան փնթփնթաց քթի տակին: Գոմի մէջ տեղում, յատակին, հերթիկից լոյս ընկած տեղում պպզած էին մի քանի տղաներ և պատանիներ և վէզ էին խաղում: Մի քանիսը նոցանից թողեցին իրանց խաղը և թափւեցան օդան, նստեցին նորա

մուտքի մօտ և սկսեցին հետաքրքրութեամբ ինձ ոտքից ցզուկս զզնել: Տանտերը հրամայեց մի քանի աթար բերեն և վառեն բուխարին: Ընդարձակ գոմի երեք պատի երկարութեամբ էլ շինւած էին մուրներ, որոց առաջ կապած էին անասունները: Մօտ 10 եզ, կով, արջառներ կային, 8 վիթխարի գոմէշներ շլթաներով կապած և 3 ձի: Ընդհանուր մաքրութիւն էր նկատուում գոմում: Տաւարների տակը աւելած էր և շաղ տւած վշրած չոր աթար: Գոմէշները օժւած էին ձէթով, որը պահպանում է նոցա կաշին զանազան հիւանդութիւններից և միջատներից: Հայ գիւղացու համար՝ նա մանաւանդ Հայաստանի այն բարձր տեղերում, ուր բնութիւնը խիստ է և տարւայ մեծ մասը ձմեռն ու ցուրտն է տիրապետում՝ կովը, եզը և գոմէշը անփոխարինելի, ամենաանհրաժեշտ տնային անասուններն են. առանց նոցա հայ գիւղացին միւլնոյն է թէ առանց կերակուրի, վառելիքի է, առանց մշակող ուժերի և ապրելու կարողութեան: Եզը և գոմէշը հերկում են նորա արտերը, տեղափոխում ծանրութիւնները: Կոջն ու գոմէշը տալիս են նորան կաթ, որից պատրաստում է նա — իւղ, մածոն, չորթան, պանիր, շօր: Կովի, եզի ու գոմէշի կղկղանքը ծառայում են իբրև վառելիք. նոցա կաշիից պատրաստում է գիւղացին իր համար տրեխներ: Երբ գիւղացու ձեռքից խեցին նորա վերջին ջուխտ եզն ու գոմէշը, այդ միւլնոյն է որ նորան եղուն է դուռ ոցեցին, մուրալու ստիպեցին:

Նս աշխատում էի խօսակցութիւն սկսել թթւած տանտիրոջ հետ. այդ ժամանակ օդան մտաւ մի երիտասարդ, որ տաճկական հագուստի վերելից մի եւրոպական ձևի կապոյտ վերարկու էր հագած. նա մի ոտքով կաղում էր: Այդ երիտասարդը տանտիրոջ որդիներից մինն էր, բաւականին ինտելիգենտ զէմք ունէր և սիրում էր խօսել:

Մանձաղ գիւղը ունի 35 տուն: Գիւղի եկեղեցին ոչնչով չէ զանազանուում միւս տներից: Կայ մի տգէտ քահանայ: Ուսումնարան չը կայ: Ձմռան մի քանի տղաներ հաւաքւում են մեր նոր ծանօթացած կաղ երիտասարդի մօտ կարդալ-գրել սովորելու: Բասեան գաւառի, (ուր մենք գտնուում ենք այժմ) հայերը, ինչպէս և Կարնոյ շրջակայ գիւղերինը՝ որովհետև աւազակաբարոյ քրդեր համարեա չը կան այդ կողմերում՝ առհասարակ աւելի ապահովւած են և անտեսական վիճակով համեմատաբար աւելի լաւ են, քան Մշոյ

և վանի կողմերի հայ գիւղացիք, բայց այնու ամենայնիւ նոքա ճնշած և հարստահարած են մոլեռանդ տաճիկներից: «Մեր թեւերը կոտրեր է այլազգը», ասում են նոքա անսահման թախծի և վախկոտութեան արտայայտութեամբ իրանց մեծ-մեծ, սև, հեղ հայկական աչքերում: Հայը միշտ պետք է թաղցնի իր հարստութիւնը տաճկի ագահ աչքերից, որի համար ոչինչ է հայի գլխին խփելը և ունեցածը խլելը: Հայը իր ժրջան աշխատութեամբ, իր դարերով ստացած կուլտուրական զարգացումով, որը ժառանգաբար հասնելով նորան՝ ձուլել է նորա օրգանիզմի հետ, մտել է նորա արեան և նեարդերի մէջ՝ բարձր է տաճկից, որի ցեղը ինչպէս անընդունակ զարգանալու եկել է միջին-Ասիայի խորքերից, այնպէս էլ մնում է մինչև այժմ: Տեսէ՛ք, հայը այստեղ շրջապատւած ամեն տեսակ կամայականութիւնով և միայն մի փոքր ազատ լինելով քրդերի ու չերքէզների վայրագ բարբարոսութիւններից, ինչպէս էլի յաջողութեամբ յառաջ է տանում իր կեանքի կռիւը: Հային տուր հող և անդորութիւն ու ազատութիւն իր գործով պարապելու, զարգանալու, և նա շուտով կը վերականգնի, կը կենդանանայ: Հայ գիւղացին այստեղ չի զանգատում հողի պակասութեան վրայ ինչպէս մենք տեսանք Ալեքսանդրօպօլի գաւառում, ուր տիրապետում է հողի սարսափելի պակասութիւն: Համայնական հողատիրութիւն, ինչպիսին է Ալեքսանդրօպօլի գաւառում և Կարսի երկրում, Տաճկաստանում, բոլորովին չը կայ: Ով ինչքան միջոց ունի, այնքան էլ հող կարող է ունենալ: Հողատիրութեան տեսակները Տաճկաստանում երեք են՝ մ'իւրի է, մ'իւր է, վակուՅ, այսինքն՝ արքունական, սեպհական և մէջէզների ու վանքերի: Աւատական կալուածատիրութիւնը ոչնչացրած է Տաճկաստանում այս դարուս առաջին կիսում՝ «դէրէբէյ»-երի և «եանըչար»-ների հետ միասին: Իբրև մասնաւոր սեպհականութիւն (միւլք) համարում են. քաղաքներում՝ այն հողաբաժինները, որոնց վրայ շինութիւններ են կառուցւած, գիւղերում՝ տները այն հողերով, որոնց վրայ նոքա շինւած են, նոյնպէս ջաղացները, ծառերը, միայն առանց հողի: «Միւլքը» տիրոջ կատարեալ սեպհականութիւն է: Իսկ միւս բոլոր հողերը թէ դաշտային և թէ արօտատեղեր ու սարերը արքունական են և միայն փողով տրւում են յայտնի բաժիններ բնակիչներին օգտուելու. դա մի տեսակ կապալ է, միայն այդ հողի

բաժինները ժառանգաբար կարող են անցնել սերնդից սերունդ՝ կազմելով իրականապէս մի սեպհականութիւն: Այդ բաժինները կարող են ուրիշի ձեռքն անցնել, ծախուել, բայց միշտ կառավարութեան գիտութեամբ, որը ինքն է տալիս ամեն անգամ նոր վկայագիր (թաբու) նոր տիրոջ անունով: Որովհետեւ այդ հողը իրաւապէս տէրութեան է պատկանում, և այսպէս ասած իբրև մշտական կապալ ծախուում է գիւղացուն յայտնի պայմաններով, ուստի այդ հողերից վերցնում է հարկ: Իսկ վա կ ու Ֆ ն երը ազատ են բոլորովին հարկից: Ճանկաստանում ով ինչքան կարողութիւն ունի՝ այնքան հող կարող է ունենալ:

Յետոյ երիտասարդը պատմում էր ինձ աւազակութիւնների մասին, թէ այս կողմերում մի քանի շաբաթ առաջ սարսափ էր ձգել յայտնի Քարամը իր խմբով. նա վերջին օրերում սպանեց երկու հարուստ հայ գիւղացի: Այդ աւազակի շափազանց սպանութիւններն ու կողպուաները ուշադրութիւն դարձրին մինչև անգամ թիւրքաց կառավարութեան ուշադրութիւնը. վիլայէթի կառավարչութիւնը ուղարկեց մի խումբ զաֆթիներ աւազակների դէմ: Քարամի խմբի և զաֆթիների մէջ պատահած ընդհարումը միայն այն հետեանքն ունեցաւ, որ Քարամը անջնաս փախաւ Պարսկաստան, այնտեղի հայերի կաշին էլ քերթելու:

Իմ տաճիկ ուղեցոյցս՝ Խալիլը, շտապեցնում էր որ ճանապարհ ընկնենք, բայց հայ երիտասարդը համոզում էր ինձ մնալ ասելով, որ մինչև միւս գիւղը հասնելը գիշերը վրայ կը հասնի, իսկ ճանապարհները երկիւղալի են: Ես հետեւցի Խալիլի խորհրդին: Երբ դուրս եկանք գոմից, ձիւնախառն քամին արդէն դադարել էր: Պատրաստում էի հեծնել ձիս, երբ իմ մօտից անցաւ մի մօտ 14 տարեկան բարձրահասակ, առողջ, գեղեցիկ դէմքով, նազելի իրանով հայ աղջիկ: Նա համեստութեամբ գետնին խոնարհեց իր սև, մեծ, փայլուն աչքերը, շարունակելով իր գործը—ձեռքից քաշ ընկած իլիկով (դուգ) բուրդ մանելը: Նորա հագուստի ձևը տաճկաստանցի կանանց ընդհանուր հագուստն է՝ կապա, կարմիր վարտիկ, առաջից և յետեւից քաշ արած գոգնոցի պէս կարմիր շորի կտորներ, այնպէս որ կողքերից երևում են ոտները և վարտիկը, մանաւանդ քալելիս. կուրծքին մի քանի դրամներ էին շարած: Այդ աղջիկը գլխին դրած էր մի փոքրիկ ֆէս, որի տակից դուրս էին պրծնում և սփռու-

ուամ մէջքի վրայ ճոխ, սև ծամերը: Ես դրի տանտիրոջ բուռը մի քանի ղուրուշ, որ իսկոյն նորա թթու կնճիռները պարզեցին և լեզուն բացեցին. «մնա՛ք բարեաւ, շէն կենաք» ասացի և քշեցի իմ սպիտակ ձին:

Խալիլի ասելով մենք դեռ հինգ ժամեայ ճանապարհ ունէինք: Անցնելով տաճկաց մի քանի գիւղերից՝ երեկոյեան ժամի 5-ին հասանք Ազար անունով տաճկաբնակ գիւղը: Խալիլը կանգնեց մի խրճիթի առջև, բացեց ղուռը և մտանք գոմը, որի մի անկիւնում օղան էր: Նկարագրել գոմը և օղան աւելորդ է, քանի որ նոքա բոլորը մի ձևով են շինած լինում:

Օդայի յատակին (միայն մի կողմից թախտ կար) փռած «քէչի» վրայ վառուղ բուխարու մօտ, ծալապատակ նստած էր մի մօտ 40 տարեկան տաճիկ սև կոլով միրուքով և ծխում էր ու զրից անում իր մօտ նստած մի ուրիշ տաճիկի հետ: Երբ ես մտայ, կոլով միրուքաւորը ձեռքը տանելով շրթունքին և յետոյ ձակատին՝ ասաց. «բարո՛վ էք եկել, համեցէ՛ք»: Դա այս տան երեք եղբայրներից մինն էր: Իսկոյն օղան լքցւեցաւ տաճիկներով. ես միայնակ մի հայ էի դոցա մէջ, այն էլ տաճիկերէն շատ քիչ հասկացող: Նոքա հետաքրքրութեամբ հարցնում էին թէ ո՞վ եմ, ո՞ր եմ գնում, ինչո՞ւ մենակ եմ ճանապարհորդում: Ես կարճ կտրելու համար բոլոր նոցա հարց ու փորձերը, ասացի թէ «գնում եմ Ստամբուլի մէքթէբը (ուսումնարան) [սօջա] (վարժապետ): Նոքա հարցրին արդեօք չե՞մ կարող ես աչք բժշկել: Ճանապարհին մինչև Երևան իմ աչքերս ցաւել էին և ես հետս վերցրել էի աչքացաւի դեղ: Ասացի որ բերեն հիւանդին, որին ես մի քանի խորհուրդներ տւի, թէ ինչպէս պէտք է մաքուր պահպանել աչքերը և կաթացնելով նրա աչքի մէջ դեղը, բոլոր սրւակը տւի իրան, ցոյց տալով գործածելու եղանակը:

Տան մէջ գտնւեցաւ մի չայդան և մի բաժակ ու Ֆինջաններ: Ես ունէի հետս թէչ և շաքար: Ուղղահաւատները ուրախութեամբ խմում էին գեպուրիս թէչը: Տաճիկները մեր թուրքերի կամ պարսիկների պէս խորշում չեն քրիստոնեայի հետ ուտել խմելուց. նոքա «հառամ» չեն համարում քրիստոնեայի ձեռք տւածը: Խալիլը տաճիկներին ասել էր, որ Զվինի «բիմ-բաշին» և «հէքիմ-բաշին» էֆէնդուս բարեկամն են. երևի այդ և այն որ ես Ստամբուլ էի գնում և Ռուսաստանցի էի՝ նոցա վրայ մի առանձին

կերպով էր ազդել և նոքա վարուում էին ինձ հետ քաղաքավարի, որքան կարող է տգէտ, մոլեռանդ տաճիկը համբերող լինել դէպի «գեալուր»-ը:

Արևը մայր էր մտել: Տանուտէրը վերկացաւ տեղիցը, առաւ մի անկիւնում ծալած կարպետը, փռեց դետին, կանգնեց վրան և սկսեց կատարել իր «նամազը», ծունր դնելով, երկիր պագանելով, «սալաւաթ» քաշելով իր երեսին և ժամանակ առ ժամանակ բարձր ձայներ արձակելով, «Ալլահ» կանչելով և քաղցր յորանջելով: Միւս տաճիկները հետևեցին նորան և ամեն մէկը առանձին կատարում էր իր նամազը նոյն կարպետի վրայ կանգնած: Արոնք նամազ չէին ուզում կատարել, շարունակում էին իրանց խօսակցութիւնը, առանց որ և է ուշադրութիւն դարձնելու աղօթողների վրայ: Յետոյ ծառան բերաւ մի ծակ մաղ, դրեց դետին, նորա վրայ մի շրջանաձև տախտակ՝ մի քանի լաւաշներ շարելով վրան: Այդ սեղանի շուրջը նստտեցին բոլորը. ես հրաժարեցայ մասնակցել նոցա ընթրիքին:

Մի մեծ աման ինչ որ իւղալի կերակրով դրւեց սեղանի մէջտեղը: Տաճիկները բոլորը կոխում էին իրանց ձեռքերը ամանի մէջ և լաւաշի կտորով կրում կերակուրը: Ընթրիքը վերջացրել էին, թէև մի քանիսը դեռ շարունակում էին սրբել լաւաշով իւղի վերջին հետքերն էլ ամանից: Օդան մտաւ մի այլևոր տաճիկ ճպուտ աչերով: Նա հասկանում էր և խօսում հայերէն:

Փոքրիկ լամպայով աղօտ լուսաւորւած օդան, զանազան չափի ու հասակի տաճիկները, նոցա խօսակցութեան աղմուկը, թութունի ծուխը, անծանօթ դէմքերը, նոր նիստ ու կացը, սովորութիւնները, մոլթ զոմը անասուններով — այդ բոլորը մի երազի տպաւորութիւն էին թողնում ինձ վրայ: Այդ տաճիկներից մէկը աչքի էր ընկնում իր լիւրք ձևերով ինձ հետ խօսելիս: Զգեստի դեղին կոճակները ցոյց էին տալիս, որ դա երևի մի եասաուլի պէս բան էր: Ներկայ եղողների մէջ էր և գիւղի «մուխտար»-ը (староста-ն — գլխիւրը): Նա ոչնչով չէր զանազանուում միւս գիւղացիներից: Մուխտարին «պէտք է ընտրեն իրանք գիւղացիք իրանց միջից, բայց այդ պէտք է»-ն ձևականութիւն է. մուխտարը նշանակուում է «միւղիրից»: Միւղիրը համայնքի (մի քանի գիւղերի), այսպէս անւանւած «նահիլէ»-ի գլուխն է. նորան ստանձնւած են մեր «գօլօվաների» ու «ուրիադնիկների» իրաւունքները և պար-

տականութիւնները: Ինչպէս միւզիբը նշանակում է մուխտարին, նոյնպէս ինքը իրականապէս ընտրւում է «գայմագամից» (մեր ПРИСТАВЪ) կամ «միւթեսարիֆից» (մեր ҮБЗДНЫЙ НАЧАЛЬНИКЪ): Միւզիբը ունի իր օգնականը (մուսավին): Միւզիբի իրաւունքները ու պարտականութիւնները սոքա են—իբրև նահիլէի գլխաւոր պաշտօնական—պօլիցիական անձն, նա պէտք է ձերբակալութիւններ անէ, հարկեր հաւաքէ, սկզբնական քննութիւն կատարէ, կառավարութեան կարգադրութիւններն նահիլէում իրագործէ և այլն: Միւզիբը իր տեղումը ամուր է, մինչև որ իրանից մեծը, որից նա նշանակւած է, պաշտօնանկ չի եղած: Պօլսի բարձր կառավարութիւնը Եւրոպայից օրինակ առնելով, կամենում է տարիներից ի վեր բարենորոգութիւններ մտցնել իր երկրում: Իորպ համար են հրատարակւած զանազան «խաթթի—շերիֆները», «խաթթի—հիւմայունները» ու «իրագէները»: Բայց լուսաւորութեան պակասութիւնը և կրթւած ու պատրաստ անձերի բացակայութիւնը խանգարում են այդ թշւառութեան և խաւարի երկրում, որը «Անադօլու» է անւանւում, մտցնել կարգ, կանոն, անգամ և ամենաաղօտ լոյս: Երկրի հետ ծանօթանալը, նորան ուսումնասիրելը ու ճիշդ զաղափար կազմելը ժողովրդի դրութեան մասին՝ աւելորդ է համարւում Պօլսում:

Չանձրանալով տաճիկների խօսակցութիւնից և ճանապարհից յոգնած՝ ես պառկեցի առանց հանւելու թախտի վրայ: Տաճիկները կամաց կամաց ցրւեցան: Օղայում մնացին մի քանիսը և Խալիլը, որոնք նոյնպէս տեղաւորւեցան քնելու:

Այսպէս անցկացրի երկրորդ գիշերը Թիւրքաց Հայաստանի տաճիկ գիւղում, շրջապատւած տաճիկներով:

*
* *

Վաղ առաւօտեան (նոյեմբերի 2-ին) աչքերս բանալով տեսայ ինձ կենդանի և փառք տւի Ալլահին: Օղան արդէն մտել էին մի քանի տաճիկներ, իսկ քնածներից շատերը նոր էին վեր կենում իրանց տեղերից և հագնւում: Բաց արին առաստաղի փոքրիկ ծակերը, ծածկւած փալաններով և մութ օղան աղօտ լուսաւորւեցաւ. դեռ արևը չէր ծագել: Լուեց դրսից գիւղի մզկիթի մինարէից մուէզ-

ղինի «ազանը»: Տանտէրը առաւ գորգը, փռեց, կանգնեց վրան և սկը-
սեց իր նամազը կատարել: Մի քանիսը կանգնելով նոյն գորգի վրայ՝
հետևեցին նորան: Մի քանի ժամանակից յետոյ, երբ արդէն դադա-
րել էր դրսից «ազանի» ձայնը, օդան մտաւ մի երկայնահասակ տա-
ճիկ, ցանցառ միրուքով, կարմիր ֆէսը սպիտակ փաթաթանով (սարըղ)
գլխին և կապոյտ տաճկական զգեստը հաղին: Նա չոքեց մուտքի մօտ
գորգի ծայրին՝ երեսն անելով դէպի աղօթող ուղղահասակները, որոնք
նոյնպէս չոքեցին: Տանտէրս և «խօջան» («վարժապետ» — այդպէս էին
կոչում այդ հոգևորականին) սկսեցին երգել, ճակատները դեմնին
կպցնել, սալաւաթ քաշել, յօրանջել և այլն: Նամազը վերջացելուց
յետոյ, գորգը մի կողմ ծալեցին և ծալապատիկ շարեցան օդայում
իրար «սալամ միակէքում» ասելով: Բուխարում վառւող աթարների
մէջ դրած էր թիթեղեաց փոքրիկ զահվէ-ամանը մի շատ երկար ու-
ղիղ կոթով: Տանտէրը ածեց դառն, մրուրախառն զահվէն Ֆինջանները
և բաժանեց բոլորին (նախ և առաջ տւեց ի հարկէ «խօջայ»-ին):
Ես գոհ էի և այդ մի քանի կում դառն զահվէից, որովհետև ամ-
բողջ գիւղում մի կտոր շաքար չը գտնւեցաւ, որ թէյ խմէի, իսկ իմ
հետ եղած շաքարը երեկ տաճիկները թէյ խմելիս վերջացրել էին:
Մինչև արևի ծագումը քիչ էր մնում, երբ ձանապարհ ընկաչ այդ
Ազար գիւղից:

Յուրտ և ամպամած օր էր: Գիշերը ձիւն էր եկել: Ձանապարհը լայ-
նանիստ բլրաձև լեռնադաշտերով բարձրանում և իջնում էր: Մեզ պատա-
հում էին մի քանի տաճիկ ու կէս տաճիկ և կէս հայ բնակիչներ ունեցող
ողորմելի գիւղեր: Որտեղ հացի հոտ կար, այնտեղ աչքի էին ընկնում
մշակւած, հերկած հողեր: Կէսօրին մօտենում էինք մի հայաբնակ գիւ-
ղի՝ Գեօփրիքեօյ անունով: Ձանապարհից ձախ գտնւող բլրաձև սարերի
կատարներին երևում էին մի քանի սոճի (շամ) ծառեր, որոնք ե-
րևի նախնի փառաւոր անտառների թշառ մնացորդներն են այժմ:

Հասնելով գիւղը, որի արտաքին տեսքը ունէր մինչև այժմ
տեսած գիւղերի բնորոշ կերպարանքը, իջանք մի միջակ կարո-
ղութիւն ունեցող գիւղացու տան առջև: Լայն դարբասը տանում էր
մի նեղ ծածկւած շվաք, որի ծայրին կար բաց անցք դէպի «զըլ-
խատունը» տանող, իսկ շվաքի ձախ պատում մի դուռ տա-
նում էր դոմբ, ուր և օդան էր: Գոմը փոքր էր և աղքատ, ինչպէս

և օղան: Մինչ Խալիլը տեղաւորում էր ձին, մտաւ գոմը մօտ 40 տարեկան մի գիւղացի տաճկաստանցիներին յատուկ հազուստով և կասկած ու զգուշութիւն արտայայտող դէմքով. նորա հետ մտան և մի դողդոջիւն, նիհար ծերուկ սպիտակ միրուքով և երկու մօտ 20 տարեկան երիտասարդներ: Դռքա էին այդ տան տղամարդիկը: Այդ գիւղում դուքան կար, որտեղ և շաքար էին ծախում, ուրեմն կարելի էր սառած մարմինս տաքացնել թէյով: Պատւիրեցի նոյնպէս և ձուածեղ:

Մինչ մենք խօսում էինք, օղան մտան երկու տաճիկներ տուրաւներն ուսերին, ճանապարհորդական ցուպերը ձեռներին և կեռ, երկար սրերը կողքերին քարշ արած: Նոքա ողջունելով նստոսեցին ինչպէս իրանց տանը և կասկածանքով նայում էին իմ վրայ: Երևի իմ օսմանցի հպատակ չը լինելս հարկադրում էր նոցա քիչ քաշել ինձանից: Տանտէրերը ստրկամիտ հնազանդութեամբ դրին նոցա առջև ոււենու ճիւղերից գործած մատուցարանը լաւաշներով: Նոքա ազահութեամբ ոչնչացրին բոլորը, վեր կացան, տաճկական ձեռով գլուխ տւին՝ մի ձեռքը մեկնելով դէպի յատակը և յետոյ տանելով իրանց ձակատը, իբրև թէ ասում լինէին՝ «քո ոտի հողը մեր գլխի վրայ», և դուրս եկան կասկածոտ հայեացքներ ձգելով դէպի իմ կողմը: Երբ նոքա հեռացան, «կոտորէ՛ք դուք» դուրս պրծաւ նոցա յետևից տան տէրերի բերաններից: «Իեռ այդ փառք է, որ կերան ու ուինչ չը վճարելով գնացին, թէ չէ առաջ դեռ փարա էլ կը պահանջէին, կը ծեծէին, կը բռնաբարէին կանանց և աղջիկներին, կը կողոպտէին և այնպէս կը հեռանային», ասում էին նոքա: Պատերազմից յետոյ տաճիկները համեմատաբար մեղմացել են Բասեան գաւառում ու Կարնոյ դաշտում, որոնք մօտ են վարչական կենտրոն Կարինին, ուրեմն և փոքր իշատէ Եւրոպային, որովհետև Կարինից մինչև Տրապիզոն կարգին ճանապարհ լինելով հաղորդակցութիւնները աւելի ղիւրին են և հարստահարութիւնների լուրը աւելի յաճախ է հասնում եւրոպացիների ականջը. իսկ Տաճկաց կառավարութիւնը միայն այդ բանից է երկիւղ կրում: Բացի դորանից քրդեր այս կողմերում չը կան, ուստի չափից դուրս վայրագ և քստմնելի բարբարոսութիւններ այս կողմերում քիչ են պատահում:

Քեօփրիքեօյ գիւղը 50 տանից է բաղկացած. ունի մի աղքատ

եկեղեցի, որը արտաքուստ ոչնչով չի զանազանուում զիւղական սներից, և մի տէրտէր: Ուսումնարան չը կայ: Անցեալ տարի այդ զիւղում կար մի վարժապետ: Նա հաւաքում էր իր մօտ տղաներին և կարդացնում: Տաճկաստանում փողը շատ քիչ լինելով, նամանաւանդ շինականներ ի մօտ, ինչպէս հարկերից շատերը, նոյնպէս և վարժապետի վճարը բաղկանում է բնական բերքերից: Այդ զիւղական վարժապետը իբրև վարձատրութիւն ստանում էր մի օդա, վառելիք (աթար) և 3 սօմար ցորեան: Մի սօմարը 16 կոտ է. մի կոտ ցորեանը մօտ 17 Ֆունտ է: Մի կոտ ցորեանը արժէ, միջակ առատութեան տարիները, մօտ 10 ղուրուշ. իսկ մի ղուրուշը մեր 10 կոպէկն է: Այսպէս հաշուելով ղուրս կը գայ, որ վարժապետի մի տարւայ վարձը մօտ 48 ռուբլի է, բացի վառելիքից և սննեակից, որոնք տրուում են զիւղացիներից անվարձ: Յիշելով հարկերի մասին, աւելորդ չէր լինի այստեղ աւելի մանրամասն կանգ առնել այդ խնդրի վրայ: Այդ սեղեկութիւնները ի հարկէ պաշտօնական չեն լինելու, այլ հիմնւած զանազան զիւղացիներից ստացած ցուցմունքների վրայ և խօսակցութիւնից ու հարց ու փորձից ղուրս բերած: Պէտք է նկատել, որ առհասարակ ուղղակի հարցերին ղժւարութեամբ է պատասխանում զիւղացին, այլ պէտք է հարցերն այնպէս խօսակցութեան մէջ յառաջ բերել, որ նա չը կասկածի էլ թէ ղուք մի առանձին նպատակով էք նորան խօսացնում, այլ այնպէս (մասլահաթօ էք անում, էլի:

Գիւղացին հողից արտահանւած բոլոր բերքերի՝ խոտ, ցորեան, գարի և այլն, ու թ մասից (առաջ 10-ից) մէկը տէրութեան է տալիս: Տունը, շարժական թէ անշարժ կայքը և առհասարակ եկամուտները զընահատուում են և զնահատած զումարից 50% (մի քանիսների ասելով և աւելի) վճարուում է իբրև մի առանձին հարկ (վերգի անունով): Անասուններից միայն նոքա, որոնք հարկաւոր են երկիրը մշակելու համար՝ եզ, գոմէշ, ձի՝ ազատ են հարկից, իսկ միւսների համար՝ այծի, ոչխարի և այլն՝ մի գլխին 3¹/₂ ղուրուշ տուրք է վճարուում (մօտ 35 կոպ.): Եթէ եզը, կովը, գոմէշը կամ ձին, որոնց համար տուրք չի սահմանւած, ծախուում են, նոյնպէս վաճառազնի 50% կառավարութեանն է: Մորթած անասունից գլխին 20 փարա (5 կոպ.) տուրք է սահմանւած յօգուտ կառավարութեան: Առն մի թղթի կտոր,

լինի դա խնդիրք թէ հողատիրութեան վկայագիր և այլն, ունի առանձին տուրք: Ամեն մի արու հայ ծնւած օրից ցմահ տալիս է զինւորական տուրք, որը առաջ 27 ղուրուշ էր, բայց Յարութիւն պատրիարքը Երուսաղէմի պարտքերի համար աւելացնել տւեց դորա վրայ և հասցրեց մինչև 32 ղուրուշի, իսկ տէրութիւնը օգուտ քաղելով այդ հանգամանքից իրա կողմից ևս աւելացրեց և հասցրեց զինւորական տուրքը (բէղէլ-ասկերիչէ) 37 ղուրուշի: Ուրեմն ամեն մի արու հայ ծնւելու օրից մինչև մահ ամեն տարի վճարում է Փաղի-Շահին, իբրև զինւորական տուրք, 3 ուռբլի 70 կոպ.: Եթէ օրինակ մի տան մէջ հինգ արու շունչ կայ, ուրեմն տարեկան այդ տնից միայն իբրև զինւորական տուրք վերցնւում է 18 ուռբլի 50 կոպէկ: Այս բոլորի վրայ աւելացրէք Վանի, Մուշի և Տիգրանակերտի կողմերում քրդերի անվերջ արշաւանքները, հուր, կոտորած ու կողոպուտները (դեռ չեմ յիշում ազգային-եկեղեցական տուրքերը՝ պսակադրամ, պտղի և այլն) և ես կարծում եմ, որ Եղիշէն եթէ ապրէր մեր օրում նոյնպէս, կ'ասէր. «Նա բնաւ ով իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար լափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային՝ թէ ուստի՞ այս ամենայն զանձ ելանէ, զիարդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեայց»:

Բայց շատ շատերը անկարող են այդ տուրքերը վճարելու և ահա դիմում է զիւղացին քաղաքի մի տաճիկ կամ հայ դրամատէրի, նորանից փող է վերցնում ահագին տոկոսիքով; առհասարակ 30⁰%, իսկ Մուշի և Վանայ կողմերում 60⁰% և աւելի: Գիւղացին գրաւ է դնում վաշխառուի մօտ իր հողը, յանձնելով նորան հողատիրութեան թղթերը (թաբու), և իր եզներն ու զումշուկները: Բայց մի քանի տարի անցնում է և խեղճը չարչարւում է ինչպէս ճանճը սարդոստայնի (ПАЗУТНА) մէջ. բայց պարտքի տակից չը կարողանալով դուրս գալ՝ զրկւում է հողից, վերջին ջուխտ եզներից և գլուխ առնում, դիմում պանդխտութեան:

Արդէն ձիաները վերջացրել էին իրանց կերը և ես պատրաստւում էի շարունակել ճանապարհս:

—Ինչո՞ւ մենակ ճանփայ կը գնաս, էֆէնդի՛, ասաց դողողիւն

ձայնով ալևորը. մեր ճանփաները խաթալու են, այլազգը գէշ աչք ունի:

—Է՛հ, ի՞նչ պիտի անեն որ, ասացի ես անհոգութեամբ:

—Աստուած տայ բան մը չը պատահի. «Աստուծոյ պահած դառը գէյը չի ուտի» — պատասխանեց ծերունին:

Քեօփրիքեօյից ճանապարհը մի բաւականին հարթ լեռնադաշտով էր, հօրիզօնից պատած սարերի անընդհատ կոհակներով: Մեր հանդէպ ճռուալով դանդաղ գալիս էր եղներով ու գոմէշներով լծած սալերի մի մեծ քարվան: Հակների վրայ Ֆրանսերէն գրւած էր «Տրապիզօն»: Այդ ապրանքները Եւրոպայից Տրապիզօն — Կարին — Բայեզէզով Պարսկաստան էին ուղղուում: Քարվանի հետ նորա ապահովութեան համար գնում էին մի քանի ձիաւոր ու հետեակ տաճիկ զաֆթիներ, որոնց հագուստը, ձիաները և առհասարակ արտաքին տեսքը խղճալի էին: Երբ ես Խալիլի հետ քշելով ձիս անցայ նոցա մօտից՝ նոքա շարած նայում էին իմ վրայ:

Մի քանի ժամանակից յետոյ իմ առջև բացւեց մի հիանալի տեսարան: Առջևս փուած էր մի լայնածաւալ դաշտ, որի միջից անցնում էր օձապտոյտ ոլորներով Ուզում գետը. դէս ու դէն երեւում էին փոքրիկ աղբատ զիւղեր: Աջ և ձախ, հեռու ամպամած հօրիզօնում, բարձրանում էին ձիւնապատ սարեր, որոնց գագաթները կորչում էին ամպերի մէջ. աջ կողմի բլրանման սարերի շղթան ծռուում էր դէպի դաշտի մէջ տեղը և այնտեղ վերջանում Հասան-ղալայի սարով, որը նման էր մի չոքած, վիզը և գլուխը գետնին դէպի հարաւարեւելք տարածած ուղտի, որի յետևից խառն ի խուռն սարերը կարծես մի ամբողջ քարվանի իրար մօտ չոքած ուղտեր լինէին: Այդ առաջնակարգ վիթխարի ուղտի՝ Հասան-ղալ սարի՝ գլուխը պսակւած էր բերդի դեռ անորոշ երևող պարիսպներով, իսկ նորա դնչի մօտ գետեղւած էր Հասան-ղալ քաղաքը: Բայց ահա սկսեց ձիւն գալ, որը և վարազուրեց մեր առջև բացւած տեսարանը:

Մենք անցնում ենք սարսափելի ցեխտտ ճանապարհով: Արդէն մօտ ենք Հասան-ղալային: Ահա և բերդը կամ ճիշդն ասած, հին հոյակապ հպկական բերդի աւերակ դարձած պարիսպները, որոնք կազմում են երեք կօնցեխտրական շրջաններ: Մուտքով նորա տակից մտանք Հասան-ղալայի ծուռը-մուռը, կեղտոտ նեղ փողոցները: Երկու կողմից

շարւած էին փոքրիկ կեղտոտ կրպակներ: Անճոռնի տները զանազանուժ են գիւղական խրճիթներից նորանով, որ քիչ մեծ են և լուսամուտներ ունին: Շատ քիչ տների փոքրիկ լուսամուտները ապակի ունին, մեծ մասը թղթով է ծածկւած. կան մի քանի տներ էլ ծուռը-մուռ պատշգամբներով, արտաքուստ զանաժ տներով, որոնց պատերի վրայ նկարւած են այնպիսի ծաղիկներ, որոնք զոնէ մեր մոլորակի վրայ չեն տեսնւած: Հարթ կուռների վրայ բարձրանում են ահագին խոտադէզեր: Անպատմելի կեղտոտութիւնը նեղ փողոցներում, բազմաթիւ գարշելի շները, խառնիճաղանձ ամբոխը տաճկական հագուստով և քաղաքի զանազան կողմերում բարձրացող մինարէները յիշեցնում են ուղեւորին, որ նա գտնւում է խաւարի և թշուառութեան երկրում, ուղղահաւասներից նւաճած աշխարհում:

Խալիլը կանգնեց մի փոքրիկ հոտած հրապարակում, որը ներկայացնում էր տաճկական կեանքի բոլոր ոչնչութիւնը, աղքատութիւնը և յետընկաժութիւնը: Փայտեայ ծուռը-մուռ սանդուղքները ուղղակի փողոցից տանում էին դահլէ-խանէի պատշգամբը: Այդ փոքրիկ ողորմելի երկարկանի տունը տաճիկների «հիւրանոց-րեստորանն» էր: Այդ «հիւրանոցի» մօտ էր և աղբիւրը և աղտեղութեանց համար շինած մի շարք նկուղներ: Քիթս բռնելով բարձրացայ պատշգամբը, բաց արի կեղտից սևացած մի դուռ և մտայ տաճկական «րեստորանի դահլիճ»-ը: Իս գաճած պատերով մի միջակ մեծութեամբ կեղտոտ սենեակ էր: Պատերին նոյն տաճկական զեղարւեստին պատկանող ծաղիկներից լանդշաֆտները և առիւծների, ձիաների և տղամարդկանց անճոռնի նկարները: Պատերին կպած շինւած են թախտաձև նստարաններ պատառոտած փայլաներով ծածկած: Աղաները և էֆէնդիները նստոտած զրից են անում, դահլէ խմում և ծխում: Մի քանիսը կիսաթէք, դէմքերի թմրածութեան արտայայտութեամբ, գետնին դրած նարգիլէներից ղլղացնելով ծծում են աղիքանման ծխաքարշերով թամբաքուփ ծուխը: Պարսիկ ծառան, դահլէամանի երկար կոթը բռնած մի ձեռքում, միւսում մի քանի փոքրիկ ֆինջաններ, մօտենում է հիւրերին և բաժանում դառն հեղուկը ցանկացողներին: Ահա՛ մէկը «կրակ ուղեց» ծխելու: Մառան մօտեցաւ կեղտոտ սեղանի (բուֆէտի) մօտ դրած երկաթէ վառարանին (սօբա), բռնեց մի վառող փայտ և սենեակը ծուխ լքցնե-

լով՝ վազեց դէպի կրակ ուզողը: Սեղանի վրայ դրած էր մի ինքնատե-
թէյամանով և ըմպանակներով (բոկալներով): Տաճկաստանում վերջին
տարիները թէյ խմելն էլ սովորութիւն է դարձել: Ղահվէխանէի
դրանը ծառային հարցրի՝ կա՞յ արդեօք մի առանձին սենեակ, ուր
կարողանայի մի գիշեր անցկացնել:

— Ինչպէս չէ, համեցէ՛ք, շա՛տ մաքուր սենեակ ունինք:

Եւնա բացեց այդ ընդհանուր սենեակից մի փոքրիկ դուռ և ես մտայ
տաճկական հիւրանոցում եղած միակ «համարը»: Բայց... ի՞նչ ասես, որ
այդտեղ չը կար.— մի անկիւնում մի սոււնդուկ՝ վրան դարսած կեղտոտ
դօշակներ, բարձեր և վերմակներ, միւսում ածած են ծառաների
կեղտոտ շորերը. պատերի մեխերից կախած են լապտերներ, ծակ
մաղեր և մի ջուխտ ցեխոտ թաց կօշիկներ. այդ փոքրիկ սենեակի
մի անկիւնում կուչ էր եկել մի պարսիկ ճանապարհորդ: Ես զգւան-
քով հարցրի.

— Սա՞ է ձեր ամենալաւ սենեակը:—

— Հրամանքս. բաս սորանից լաւ էլ ի՞նչ ես ուզում:

Ես կամենում էի դուրս գալ: Խալիլը հաւատացրեց, որ Հասան-
ղալպում դրանից լաւ «խան» (հիւրանոց) չի կարելի գտնել: ձարա-
հատեալ հաշուեցայ այդ տաճկական հիւրանոցի «համար»-ի հետ,
որը լուսաւորւած էր առաստաղի տակին գտնուող երկու փոքրիկ քա-
ռանկիւնի ծակերով, մէկը ապակիով, միւսը թղթածածկ: Գաճած
պատերին ցցւած էին մի քանի մեխեր: Յած առաստաղը զոյնզոյն
ներկած տախտակներից էր, յատակը հողածածկ, վրան մի ծակ խա-
սիր փռած: Կահ կարասիքի հետքն անգամ չը կար: Ես բերել տւի
հարեան սենեակից մի աթոռ և մի սեղան: Այդ սենեակը Տաճկաս-
տանից դուրս՝ մի մառանի անուն կարող էր կրել:

Խալիլը դնացել էր ձիաները տեղաւորելու. պարսիկ ճանապար-
հորդը սենեակումը չէր: Ես շատ քաղցած էի, իսկ «հիւրանոցում»
ոչինչ չը կար ուտելու: Իմ երեւոյս ընդհանուր հետաքրքրութիւն
էր յարուցել զահվէխանում: Մի քանի ըրպէից յետոյ սենեակիս դուռը
բացւեց և մտաւ մօտ 40 տարեկան մի մարդ տաճկական հագու-
ստով, գլխին Փէս, ճակատի շուրջը փաթաթած մի կեղտոտ թաշ-
կինակ: Նա զգուշութեամբ փակեց դուռը և սկսեց ցած ձայով,
վախվածով և միշտ դէպի դուռը նայելով ինձ հետ խօսել: Միայն

այդ ժամանակ իմացայ, որ նա հայ է: Նա համարեա՛ ամեն մի խօսքից յետոյ աւելացնում էր «ղուրբան» բառը: Երբ նա իր հետաքրքրութիւնը իմ մասին յագեցրեց և իմացաւ ո՞վ եմ, ո՞ւր եմ գնում՝ ասաց.

—Աղայ, զուրբա՛ն, աս շների մէջ գիշերը մէնակ ի՞նչպէս պիտի մնաս. երկիւղալի է, զուրբա՛ն:

—Այտեղ ծանօթներ չ՛ունիմ, որ նոցա մօտ իջնէի: Բայց այդ ոչինչ, ասա՛ ի՞նչպէս ուտելու բան գտնեմ. շատ քաղցած եմ:

—Փարա տուր, զուրբա՛ն, գնամ միս առնեմ, փուռնիչի մօտ պատրաստել տամ, զուրբա՛ն:

—Մռ, դէ շուտ արա՛:

—Հա, զուրբա՛ն, հա, հիմա կը բերեմ:

Մի քանի ժամանակից յետոյ նա եկաւ, ձեռքին բռնած մի սեւաջած թիթեղեայ թաւա, մէջը լի տապակած մսի կտորներով, վրայից ծածկած մի քանի լաւաշներ: Նա դրեց սեղանի վրայ և սկսեցինք ուտել, ի հարկէ առանց պատառաքաղի, դանակի, պնակի և այլ «բնքշութիւնների», որոնց գործ պծելը տաճկական հիւրանոցում չի ընդունւած: Իմ նոր ծանօթս ազահութեամբ իւղալի կտորները փաթաթում էր լաւաշի մէջ և լքցնում բերանը: Երբ Խալիլը մտաւ սենեակը, նա հեռացաւ:

Մինչ Խալիլը նստած գետնին վերջացնում էր ամանում մնացածը, ներս մտաւ սենեակս մի տաճիկ պաշտօնեայ: Նս ճանաչեցի նորան. դա Զվինի մաքսատան ծառայողներից մէկն էր: Նա էլ ինձ ճանաչեց և շողաքորթութեամբ ողջունելով ու տեսնելով Խալիլին, իսկոյն չոքեց նորա կողքին և ազահութեամբ ոչնչացրեց մնացած մի քանի կտորները: Երբ այդ «էֆէնդին» լաւաշով սրբեց թաւայի իւղի վերջին հետքերն էլ, այն ժամանակ միայն նա սկսեց հանել ճանապարհին թրջած վերեւի շորը և իր ցեխտած կօշիկները, որ և կախեց սենեակում ցցած մետերից: Այդ տաճիկը, որին բոլորը յարգանքով «էֆէնդմ» էին անում՝ մի փոքրահասակ, նիհար, կապկի երեսով, կտորած քթով, սև դէմքով մարդ էր: Մաշած համազգեստի կոճակները բաց էր արել, որ սպիտակ ժիլէաը ցոյց տայ: Կարճ, նեղ վարտիկի վրայ երևում էին կարկատաններ: Գլխին դրած էր մի մուգ-կարմիր, տափակ հին ֆէս:

Ես պատուիրեցի բոլորիս համար զահվէ: Շատախօս էֆէնդին զանգատուում էր իր շնչին ոռճկից և վատ ապրուստից: Այդ միջոցին մտաւ մի տաճիկ վաճառական, գլուխ տւեց էֆէնդուն, և առանց խօսելու հանեց իր վերարկուն, փռեց զետնին, կանգնեց վրան և սկսեց իր նամազը: Նամազից յետոյ նա բացեց իր հետ բերած թաշկինակը, ուր դրած էին մի քանի լաւաշ և ածած բաստրմայի մանր կտորներ և սկսեց ուտել: Տաճիկ էֆէնդին մօտը պագեց՝ այդ ուղևոր վաճառականին էլ օգնելու:

Արդէն մթնել էր. ճրագները վառել էին: Բաւական չէին փոքրիկ սենեակում եղածները, մի էֆէնդի էլ մտաւ, որ Զվինի պաշտօնեայի երեւի ծանօթն էր: Այդ երկուսը և վաճառականը ծալապատիկ նստած ծխում էին և զրից անում:

Իէպի մեծ սենեակը տանող դուռը բաց էր: Մուխը ամպի պէս բարձրացել էր այնտեղ: Յիշոց, ծիծաղ, աղմկալի խօսակցութիւններ՝ խառնուում էին իրար: Կամաց-կամաց զահվէխանէն ղատարկում էր: Մի անկիւնում նստտած էին մի քանի հոգի տաճիկներ և նոցա մօտ կանգնած էր մի մարդ, որը խլացուցիչ ձայներ հանելով զմայլեցնում էր իր լսողների տափոտ երևակացութիւնը և հեշտասիրութիւնը ամենակեղտոտ բովանդակութիւն ունեցող երգերով: Մի քանիսը նոյն սենեակում արդէն հանում էին և տեղաւորում քնելու պատին կպած թախտերի վրայ:

Մեր փոքրիկ սենեակումը, բացի ինձանից և Խալիլից, մնացին Զվինի պաշտօնեան և տաճիկ վաճառականը: Նոքա պառկեցին ծառաների կեղտոտ, հոտած անկողիններում: Ես ձգեցի մի անկիւնում ետփունջիս, դրի բարձս և առանց հանելու փաթաթեցայ պլէդիս ու բրդեայ վերմակիս մէջ և, չիշելով հայի խօսքերը, լէվօլլէրները մօտս պատրաստ՝ քնեցի:

* * *

Միւս օրը (նոյեմբերի 3-ին), վաղ առաւօտեան արդէն ոտի վրայ էի: Դուրսը սարսափելի ձիւնախառն քամի էր: Այդ բուքին անկարելի էր ճանապարհ ընկնել: Ես թէչ բերել տւի ինձ և Խալիլի համար. տաճիկ էֆէնդին միւս սենեակումը վաճառականի հետ նար-

գիլէ էին ծխում և դահվէ խմում: Մի քանի ժամանակից յետոյ Զվինի պաշտօնեան կրկին մտաւ մեր սենեակը և իր շողոքորթական ձևերը աւելի շատացնելով՝ պտտում էր իմ շուրջը և երևում էր, որ մի բան ուզում է ասել: Վերջապէս նա վճռեց խօսել.

— Գիտէ՞ք, էֆէնդմն, ճանապարհին շատ ցուրտ կը լինի, շատ լաւ է ճանապարհի համար ումը: Ռումը որ խմէ՞ք՝ կը տաքանաք և ցուրտ չէք զգալ: Այստեղ շատ լաւ ում են ծախում: Եթէ փող տաք, ես ձեզ համար կը գնեմ: Ես լաւի տեղը գիտեմ:

Երբ ես նորան փող տւի, նա տաճիկներից ծածուկ գնաց ում գնելու և վերադարձաւ շորերի տակին բռնած մի թիթեղեաց, նաւթի համար գործածող ամանով (որ տեսնողները նաւթի տեղ ընդունեն) իր սիրած խմիչքը: Մտնելով սենեակը, գողի պէս դուռը փակեց, հանեց ում մի ամանը շորերի տակից և դրեց սեղանի վրայ բացականչելով.

— Փէ՛հ, փէ՛հ, մի համը տեսէք ի՞նչ բան է, է՛:

Ես քիչ ածեցի իմ թէյի մէջ և նորա թէյից ազատած ըմպանակը լքցրի ումով: Նա ազահուլթեամբ վեր առաւ ըմպանակը, դէպի դուռը կասկածանքով նայեց և մի վայրկեանում շուռ տւեց սիրած խմիչքը իր կողորդը: Յետոյ սկսեց ջուր ածել ըմպանակը, որ ումի հոտը իրան չը մատնի ուղղահաւատներին:

Բուքը արդէն դարարել էր: Երբ ուզում էի դահվէխանէի ծառայի հետ հաշիւներս վերջացնել, էֆէնդին միջամտեց խնդրելով, որ ես նեղուլթիւն չը քաշեմ, նա ինքը բոլոր հաշիւը կը պարզի: Վերջացնելով հաշիւը նա յայտնեց, որ ահա այսքան պէտք է վճարել: Այդ հաշուում նա մտցրել էր և իր արած բոլոր ծախսերը, իր ծանօթներին հիւրասիրածը և մինչև անգամ իր ձիու գարու և դարմանի փողը: Ես ամաչեցի նկատել այդ նորան, կարծելով որ նա միւլենոյն է հետս դալու է Կարին, գուցէ մտադիր է այնտեղ վճարել և այժմ փող չ՞ուլնի:

Արդէն ձիաները պատրաստ էին, էֆէնդին առաջարկեց որ ումով ամանը տամ իրան պահելու: Ես համաձայնեցայ, չ՞ուլեմալով զորկել նորան իր սիրած առարկայից և նա կոխեց ամանը իր ջէրը: Երբ իջանք դահվէխանէի սանդուղքներից՝ էֆէնդին ասաց.

— Դո՛ւք, էֆէնդմ, գնացէ՛ք, ես հիմա ձիս պայտել կը տամ և իսկոյն, մի վայրկեանում, կը հասնեմ ձեզ:

Ես և Խալիլը ճանապարհ ընկանք Հասան-ղալայից ձիւնապատ դաշտով: Ծանապարհին մի քանի անգամ յետ էինք նայում տեսնելու տաճիկ պաշտօնեային. բայց աչքից կորաւ և Հասան-ղալէն, անցանք և մի քանի գիւղեր, բայց խորամանկ տաճիկն այլ ևս չը պատահեցինք: Խալիլը ծիծաղում էր իր քթի տակ: Ես հասկացայ տաճիկ պաշտօնեայի ճարպիկութիւնը: Դա էլ տաճիկ պաշտօնեայի ճրիակերութեան և կաշառակերութեան աւելի քաղաքավարի տեսակն էր: Եւ զարմանալի կը լինէր աւելին պահանջել այդպիսի խաւար, աղքատ և անկարգ կառավարութեան տգէտ և քաղցած պաշտօնեաներից...

Մի քանի անգամ բարձրանալով և իջնելով ձիւնապատ լեռնադաշտերի զառիվայրերով, կէսօրին հասանք մի տաճկական գիւղ՝ Քօրուջուխ անունով, որից մինչև Կարին մօտ չորս ժամայ ճանապարհ էր մնում: Այդ գիւղը, մօտ լինելով քաղաքին և հաղորդակցութեան աւելի դիւրին միջոցներ ունենալով, կարողանում է տանել քաղաքի շուկան զանազան մթերքներ վաճառելու. բացի այդ՝ Կարինը լինելով ամբողջ թիւրքաց Հայաստանի և համարեա բոլոր Փոքր-Ասիայի ամենամեծ թէ վարչական և թէ առևտրական կենդրոններից մէկը, ենթարկել է, թէև ամենաշնչին շափով, եւրոպական ազդեցութեան: Այս հանգամանքների շնորհիւ Քօրուջուխ գիւղը աւելի հարուստ է, աները աւելի մեծ են և ունին մինչև անգամ ապակիաւոր փոքրիկ պատահաններ, իսկ հիւրերի համար օդաները զոմից դուրս են և առանձին, ունին գաճաճ պատեր և երկաթեայ վառարաններ (սօբա):

Քօրուջուխից մինչև Կարին ճանապարհին արդէն երթեկների թիւը քանի գնում շատանում էր: Ուղտերի մի անվերջ քարվանս կտրում էր մեր ճանապարհը, այնպէս որ մենք քշում էինք նոցա կողքերով, աշխատելով նոցա առաջը տալ. բայց մի շարքի առաջը տալով հանդիպում էինք մի ուրիշի և այսպէս համարեա շարունակում մինչև Կարին: Այդ բեռնաբարձ այլանդակ անասունները, շարած իրար ետևից, համրաքայլ շարժւում էին և մի քանիսի վզերից կախած մեծ զանգակները հանում էին միօրինակ, չափական ղօղանջիւն, դրնգ-դրնգոց: Այդ անհամար ուղտերի քարվանսը կազմում էր ընդհատուղ շարքերից, ամեն մէկում 6—10 հատ ուղտ, իրար ետևից կապւած երկար պարաններով և հետերը մի մի ուղտապան:

Բարձրանում ենք Դավաբոյնու սարով, որի վրայ այնպիսի ցրտեր
 և բուք է անում, որ շատ անգամ սառչում են և ձիւնի տակ թաղ-
 ւում մարդկանց և անասունների ամբողջ խմբեր: Ահա՛ իմ առջև
 բացւեց ձիւնի սպիտակ սաւանով ծածկած ընդարձակ մի լեռնադաշտ
 շրջապատած զանազան կողմերից սարերի շղթաներով: Դաշտի մէջ
 տեղում, ձիւնի թանձր խաւի տակից, ցցւում են բարակ բարձր մի-
 նարէները: Ճանապարհի երկու կողմից զանազան բարձրութիւնների
 վրայ զետեղւած են մարտկոցներ, բոլորը թաղւած ձիւնի տակ:

—Տե՛ս, այն է Երզրումը, ցոյց տւեց ինձ Խալիլը:

Մտնում ենք Կարին քաղաքին: Ահա և քաղաքի հաստ,
 ամուր պարիսպները: Անգլիացի ինժեներները իրանց հմտութիւն-
 ները և ջանքերը չեն խնայել ամրացնելու Կարինը:...

(Կը շարունակւի)